Քաթա՝ գաթա պատրաստում և ցանքի օրը կոտրում էին եզան գլխին և ուտում էին թե՛ ռաշպարը, թե՛ հօտաղնէրը, որ բերքն առատ լինի, աշխարհը կըշտացնի[14]։

Սերմացանը սերմը ցրելուց առաջ երկար խաչ էր քաշում երեսը և ասում՝ «Տէր աստած, դու միևը հրզա՜ր ընէս»։

Երաշտի ժամանակ մատաղ էին մորթում. խեղդվածի գերեզմանի վրա ջուր էին ածում[15] և այնտեղից բերած ջուրը արտում ցանում, կամ մի զօրավոր ՚ար տեղից վերցնում, գետի կամ աղբյուրի մեջ լողացնում և բերում նորից տեղը դնում[16]։ Այդպիսի խաչքարեր կամ պարզ գերեզմանաքարեր գյուղերից շատերի մոտ կային։

Ջուր էին ածում էշի գլխին։ Սակայն ամենակտրուկ միջոցը համարվում էր գետ կամ առու երեք անգամ ալաթավ վարելը։ Վեց կին լծվում էր եզների փոխարեն ալաթի մեջ, մի կինն էլ ճիպօտը ձեռքին քշում էր նրանց որպես հօտաղ, մի հասակավոր կին՝ փափախը տղամարդու պես գլխին դրած և առջևից շէրէփր առնանդամի տեղ կախ արած՝ բռնում էր մաճը և ալաթի խոփը թարս գցած՝ երեք անգամ անց էր կացնում գետակի կամ առվակի երկարությամբ ակոս ձգելով և ամեն տեսակ բացականչություններով, «յէզնէրին» հայհոյելով և աղմկելով, ներկայացնում էր իբր թե դժվար վար է[17]։

Երկարատև անձրևներից ցանքը պաշտպանելու համար նույն քարերի վրա կրակ էին վառում, կամ առջևեկ երեխայի ետույքը բացում՝ անձրևին ցույց տալիս կամ Ճոլի էին շինում։

Մի երկար շերեփին մի այլ ավելի կարճ շերեփ խաչաձև կապած՝ աղջիկները հագցնում էին կնոջ ձևով, Ճոլի տիկնիկ շինում և պէպէգ՝ ոտաբոբիկ շրջեցնում էին այդ Ճոլին պարելով տնետուն և երգում[18]՝

Ճոլի, Ճոլի, էս Ճոլի,
Մարդը մէռած էս Ճոլի,
Տղան մէռած էս Ճոլի։

Ճոլին ընկավ ծովը....
Ծովիցը հանող չը կա,
Սիջիմ[19] պէրէ՜ք, տո՜ւս օնէք,

---

[14] Ողջի (Օխշի)։

[15] Օրինակ՝ Բեխի Սուրբ Արիստակէս անապատի ճանապարհին։

[16] Օրինակ՝ Տաթև գյուղում Պէտրոսախաչը։ Տաթևում անձրև առաջացնելու համար դիմում են և այս միջոցին։ Կիրակի առավոտ, երաշտի ժամանակ աղջիկները ման են գալիս տնետուն, հավաքում են զանազան ուտելեղեն և հետները տանում մի սարի գլուխ, որտեղ ընդհանուր ճաշ են սարքում, երգում, ուտում, խմում, զվարճանում։ Այդ սարից ճաշից հետո վերցնում են մի քար և տանում են մոտակա վտակը։ Այդ ծիսակատարության ժամանակ աղջիկները չպիտի ետ նայեն։ Քարը ձգում են ջրի մեջ և նրա մեջ թողնում մի նկատելի տեղ, որ երբ արդեն հարկավոր չի լինի՝ տանեն ետ, դնեն հին տեղը, թե չէ սաստիկ անձրևը կարող է սրբել՝ տանել բոլոր ցանքսերը»։ СМОМПК, вып. XIII, отд. 1, էջ 115։

[17] Վերջին անգամ այսպիսի գետ վարելու դեպքը տեղի է ունեցել պառավների մասնակցությամբ Լոր գյուղում սովետական կարգերի հաստատվելուց հետո առաջին տարիներին։

[18] Արծվանիկ։

[19] Այծի մազից պատրաստած երկար պարան։